

# ՉԱՅՆ

# ՀԱՄԱՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

## ՇՆՈՐՅԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Հայտնի է, որ երկար տարիներ Աբխազիայի հայ համայնքը համարյա չի առնչվել Հայ Առաքելական եկեղեցու հոգևորականության հետ: Օրերս առիթ ունեցանք հանդիպելու Հայ Առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի Աբխազիայի նորաստեղծ հովվության հոգևոր հովիվ, հոգեշնորհ Տեր Տարոն արքեպիսկոպոստին:

### – Հայր Սուրբ, խնդրում ենք պատմե՞ք Ձեր մասին:

– Ծնվել եմ 1976-ին, Էջմիածին քաղաքում, 1993-ին ավարտել եմ թիվ 1 միջնակարգ դպրոցը, այնուհետև ընդունվել եմ Շիրակի թեմի Հոգևոր ընծայարան, որն ավարտել եմ 1996-ին: Ծառայել եմ մեր ազգային բանակում որպես զորամասի հոգևոր սպասավոր, սովորել եմ Երևանի տնտեսագիտական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանն ավարտել եմ 2005-ին:

Առաջին աշխատանքը, որ պատիվ ունեցա կատարելու Մայր Աթոռում՝ վեհարանի հյուրընկալը եղավ, զբաղվում էի այլևայլ երկրներից եկող հյուրերի ընդունման հարցերով:

Այս տարի հունվարին երեք ամսով մեկնեցի Հնդկաստան՝ անգլերեն լեզվի դասերի: Դասընթացը կազմակերպել էր դեսպանատունը, որը երկու տեղ էր տրամադրել Մայր Աթոռին: Հնդկաստանից վերադառնալով, Հայ Առաքելական եկեղեցու Հարավային Ռուսաստանի թեմի առաջնորդ, գերաշնորհ Տեր Մովսես եպիսկոպոս Մովսեսյանի հրամանով 2006թ. ապրիլի 15-ից նշանակվեցի Աբխազիայի հովվության հոգևոր հովիվ:

– Ի՞նչ վիճակում է հովվությունը, հայտնի է, որ տասնամյակներ շարունակ



Աբխազիայի հայությունը չունի հայկական գործող եկեղեցի:

– Երկար ժամանակ հոգևորականության բացակայության հետևանքով Աբխազիայի հայերը բացարձակ տեղյակ չեն Հայ Առաքելական եկեղեցու խորհուրդներին և արարողություններին: Նշանակվելով այնտեղ, ես հասկացա, որ հայ համայնքը շատ մեծ անհրաժեշտություն ունի հոգևոր կյանքի: Մատուռը, որտեղ սպասավորում եմ, հիմնվել է 2001թ. Գագրա քաղաքում, հենց Գագրայի բնակիչ Արկադի Սարգսյանի նախաձեռնությամբ: Սուրբ Հռիփսիմե մատուռում կատարվող հոգևոր արարողությունների մասին հայտարարություններ ենք հեռարձակում Գագրայի հեռուստատեսությամբ, ըստ որի էլ բնակչությունը գալիս և մասնակցում է դրանց: Նկատել եմ, որ մարդիկ եկեղեցու հանդեպ բավականին դրական են տրամադրված և ձգտում են մասնակցել բոլոր արարողություններին: Հատկա-

պես շահագրգռված են, որ խորհրդակատարություններն արվեն հենց Առաքելական եկեղեցուն:

– Հայր Սուրբ, տեղի հայերը օգնու՞մ են եկեղեցուն:

– Այո, իհարկե, շատ է օգնում Աբխազիայի խորհրդարանի պատգամավոր, Աբխազիայի հերոս Գալուստ Տրապիզոնյանը: Գագրացի գործարար Վահան Մինասյանը աջակցում է և՛ ֆինանսապես, և՛ իր մեքենայով ինձ տարբեր գյուղերն է տանում: Ես Գագրայում ապրում եմ Արամ Ուստյանի տանը: Նա բնակվում է Մուկվայում և իր երկհարկանի առանձնատունը սիրով և անշահախնդրի տրամադրել է Հայ Առաքելական եկեղեցու կարիքների և իմ բնակության համար:

– Իսկ հայկական դպրոցներ այցելու՞մ եք...

– Այո, հոգևորի հետ ծանոթացնելու նպատակով հայ համայնքի համանախագահներ Գալուստ Տրապիզոնյանի և Խաչիկ Մինասյանի հետ քանիցս այցելել ենք դպրոցներ և գրուցել աշակերտների և ուսուցիչների հետ: Դեռևս բոլոր դպրոցներում չեն եղել: Դժվար է, քանի որ Աբխազիայի միակ Հայ Առաքելական հոգևորականն եմ, ցանկալի է, որ տեղացի երիտասարդներից ևս հոգևորական դառնալու ցանկություն հայտնողներ լինեն: Նոյեմբերին մասնակցեցի Պրիմորսկոյե գյուղի դպրոցի հիմնադրման 80-ամյակին նվիրված հանդիսությանը, որին ներկա էին Աբխազիայի կրթության նախարարը, խորհրդարանի պատգամավորներ, բարձրաստիճան պաշտոնյաներ:

Ասեմ նաև, որ գերաշնորհ Տեր Մովսես եպս. Մովսեսյանը Մայր Աթոռի պատկերով 2000 փոքրիկ օրացույցներ է տվել, որ բաժանեն Աբխազիայի հայ դպրոցական-

ներին:

– Հայր Սուրբ, իսկ ի՞նչ հարաբերություններ են հաստատվել Աբխազական Ուղղափառ եկեղեցու հետ:

– Մենք ջերմ և եղբայրական հարաբերություններ ունենք Աբխազական Ուղղափառ եկեղեցու և նրա թեմական խորհրդի համանախագահներ Հայր Վիսարիոնի և Հայր Անդրեյի հետ:

– Հայր Սուրբ, կարող եք մեր թերթի միջոցով Ամանորի և Սուրբ Ծննդյան առիթով Ձեր բարեմաղթանքները հղել Ձեր հոտին:

– Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնեալ է հայտնությունը Քրիստոսի:

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության մեծ և սքանչելի ավետիսով թող բացվեն դռները Նոր տարվա, որ իր հետ բերի բարի օրեր և խաղաղություն նաև հայ ժողովրդին և Հայաստանյայց եկեղեցուն, մանավանդ հեռավոր Աբխազիայում ապրող մեր ազգաբնակչությանը:

Սիրելի՛ արխագահայություն, թող Բարձրյալն Աստված պահի պահպանի Ձեզ ամբողջ և անխռով ու սիրով միաբան, մեր սուրբ հավատքի վեմի վրա անշարժ, առաքինի ու եկեղեցանմեր և ազգաշեն գործերի փառավոր հաջողությամբ:

Ողջ և անասան մնացե՛ք և քաջալերվեցե՛ք՝ Սուրբ Ծննդյան շնորհներով զորացած, գործեք սուրբ եռանդով գոտեպինդ, խաղաղ ու լավատես, Ձեր հայացքը սևեռեք դեպի Սուրբ Էջմիածին՝ Աստվածակառույց հավատքի սյունն ամենայն հայոց:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ:

Հարցազրույցը՝ Սաթիկ Միսակյանի և Սեդրեյ Վարդանյանի

## ՏԱՂԱՎԱՐ ՏՈՆԵՐ

**Տաղավար տոներ.** Հայ Առաքելական եկեղեցու հինգ մեծ Տերունի տոների անվանումը, որոնք ունեն շաբաթապաս, նավակատիք, մեռելոց և տևում են մի քանի օր: Այդ տոներն են՝ Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն (8 օր), Չատիկ (50 օր, Չատիկից մինչև Հոգեգալուստ 50 օրերը, կոչվում են Հինուկ կամ Հիսուկ, Տերունի են՝ ի պատիվ Հարության տոնի), Վարդավառ (Այլակերպություն և Պայծառակերպություն՝ 3 օր), Վերափոխումն Ա. Աստվածածնի (9 օր) և Խաչվերաց (7 օր):

Հին կտակարանում նկարագրվում է հրեաների մեծահանդես արարողությամբ տոնակատարվող Տաղավարահարաց տոնը՝ աշնանային բերքահավաքի տոնը, կատարվել է յոթերորդ ամսվա 15-րդ օրը և տևել յոթ օր (Ղևտ. 23.33 - 43, Բ Օր. 16.13—17): Տաղավարահարաց տոնը հիշատակվում է նաև Նոր կտակարանում (Հովհ. 7.2—10), նաև հիշատակվում են Հիսուսի ուսուցումները տոնակատարության ժամանակ (Հովհ. 7.11-24, 37-39): Այդ օրերին հրեաները յոթ օր ապրել են վրաներում (տաղավարներում, այստեղից էլ՝ տոնի անունը) և մեծ տոնախմբություններով, ողջակեզ մատուցելով, հանդեսներով երախտագիտություն հայտնել Աստուծո՛ւ պարզևած բարիքների համար: Ենթադրվում է, որ Տաղավար անվանումն առաջացել է այդտեղից և գործածական դարձել քրիստոնեական մեծ Տերունի տոների համար:

## ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԻ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆ

**ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԻԸ և ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ** Հայ Առաքելական եկեղեցու հինգ Տաղավար տոներից է, որը նվիրված է Աստվածորդու՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյանն ու Աստվածահայտնությանը (Սկրտությանը): Տիրոջ ծննդյան տոնակատարության առաջին հիշատակությունները սկսվում են 3-րդ դարից: Արևելքում մինչև 4-րդ դարը Քրիստոսի ծննդյան տոնը կապվել է Աստվածահայտնության, այսինքն՝ Սկրտության տոնի հետ, որը նշվել է հունվարի 6-ին: Սակայն 336-ին Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը պաշտոնապես որոշել է Հիսուս Քրիստոսի ծննդյան օր: Այս միջոցով քրիստոնյաներն ամենայն հավանականությամբ նպատակ ունեին այդ օրը տոնվող Արևի չաստված Միթրայի մեծ ժողովրդականություն վայելող տոնակատարությանը հակադրել «Արդարության Արեգակի»՝ Քրիստոսի ծնունդը: Հետագայում՝ 4-րդ դ. վերջին, Ասորիքում, իսկ ապա՝ 5-րդ դ. կեսին, գրեթե ողջ Արևելքում (Ալեքսանդրիայում, Անտիոքում, Կ. Պոլսում) Քրիստոսի ծննդյան տոնի օրը փոխադրվել է դեկտեմբերի 25-ին, իսկ հունվարի 6-ը մնացել որպես Տիրոջ Աստվածահայտնության օր: 451-ին Քաղկեդոնի ժողովը դեկտեմբերի 25-ը վերջնականապես հաստատել է Հիսուսի ծննդյան օր, թեև Երուսաղեմի եկեղեցին մինչև 549-ը շա-



րունակել է նշել հունվարի 6-ին: Միայն Հայ եկեղեցին է, որ հաստատում է մնացել հնագույն ավանդույթին և Քրիստոսի Ծննդյանն ու Աստվածահայտնության տոնը շարունակում է նշել միասին՝ հունվարի 6-ին: Հայ եկեղեցուն Սուրբ Ծնունդը և Աստվածահայտնությունը օրացուցային տարվա առաջին տոնն է:

Եկեղեցական տոնակատարությունն սկսվում է հունվարի 5-ի երեկոյան՝ Երագալույցի կամ Խթման ս. Պատարագով, որին նախորդում է յոթօրյա պահեցողության ու ապաշխարության շրջանը: Երե-

կոյան ս. Պատարագի ընթացքում հնչում է ավետիսը՝ «Քրիստոս ծնավ և հայտնեցավ»: Պատարագից հետո պառնոց լուծվում է, և սկսվում ուտիքի ու տոնակատարության շրջանը, որը տևում է մինչև հունվարի 13-ը: Այս բոլոր օրերին քրիստոնյաները միմյանց ողջունում են «Քրիստոս ծնավ և հայտնեցավ» ավետիսով, որի պատասխանն է՝ «Ձեզ և մեզ մեծ ավետիս»:

Գլխավոր տոնակատարությունը կատարվում է հունվարի 6-ին՝ ս. Պատարագի հանդիսավոր արարողությամբ ու Ջրօրհնյաց մեծաշուք հանդեսով: Ջրօրհները նվիրված է Տիրոջ մկրտությանը և այդպիսով՝ ջրի սրբազորման մեծագույն խորհրդին:

Հունվարի 7-ը, ինչպես և բոլոր Տաղավար տոներին հաջորդող օրերը, մեռելոց հիշատակության օր է, երբ հոգեհանգստյան ս. Պատարագից հետո հավատացյալներն այցելում են իրենց հարազատների շիրիմներին:

Հանդիսություններն ավարտվում են հունվարի 13-ին՝ Հիսուսի անվանակոչության տոնակատարությամբ, որը նվիրված է Տիրոջ յոթ օրական հասակում տաճար բերվելու, ութերորդ օրը թվատվելու և Հիսուս անունը ստանալու հիշատակին:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002թ.

ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ — 90



Այս տարի լրացան համշենահայ նավագանի մտավորական, հասարակական գործիչ, գրող և երկարամյա մանկավարժ Անդրեյանի 90-ամյակը:

Մոլոկովի փողոցում գտնվող նրա երկհարկանի տանը շատ հայ մտավորականներ, արվեստի, գիտության ու կրթության գործիչներ են հյուրընկալվել: Համշենահայերի հոգսերով Հայաստան գալիս հաճախ էր հանգրվանում մեր տանը: Երեխաներս շատ էին սիրում նրան, քանզի նման էր հեքիաթի բարի ծերուկի կամ հայկական Ձմեռ պատյի: Բարություն էր սիրում իր շուրջը, ներողամիտ էր ու համբերատար և նույնն էլ մեզ էր հորդորում:

Նա ծնվել էր 1916թ. հոկտեմբերի 20-ին Սոչիի Լազարևսկի շրջանի Վերին Բուռ գյուղում: Ծնողները, հայրը՝ խաչիկը, և մայրը՝ Լուսիգ Մինայանը, գաղթել էին Սամսոնի շրջանից 1913թ.: Տարրական կրթությունը ստացել էր հայրենի գյուղում, որից հետո զբաղվել էր ինքնակրթությամբ: 1932թ. ընդունվել էր Դոնի Ռոստովի հայկական մանկավարժական տեխնիկոնը և սովորել մեկուկես տարի: Այնուհետև 1940-ին ավարտել էր երևանի մանկավարժական տեխնիկոնը, 1949-ին՝ Սուխուმი մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետի հեռական բաժինը: 1934թ. սկսել էր աշխատել խրվատֆորով գյուղի յոթամյա դպրոցում, որպես աշխարհագրության և պատմության ուսուցիչ:

Անդրանիկ Ձեյթունյանը 1934-1967թթ. որպես ուսուցիչ, ուսմասվար և դպրոցի տնօրեն էր աշխատել Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի տարբեր հայկական դպրոցներում, Գագրայի և Աղեթի շրջանների լուսբաժիններում՝ հայկական դպրոցների տեսուչ: Ամեն անգամ, երբ միասին շրջում էին Աբխազիայի կամ Կրասնոդարի երկրամասի հայկական գյուղերով, ինձ զարմացնում էր, թե նա ինչ մեծ հեղինակություն էր վայելում համշենցի հայերի շրջանում: Տարիքն առած մարդիկ, նույնիսկ ամենահեռավոր խոստորներում և ստանիցաներում, խոր հարգանքով բարևում էին, հետը խոսելիս աշակերտի նման գլխահակ լսում: Եվ ամենուր նա խոսում ու համոզում էր: Մի տեղ՝ գրական խմբակ ստեղծել, մի այլ տեղ՝ պատմության քանգարան, երրորդում՝ քատերական խմբեր ու պարախմբեր, չորրորդում համոզում էր երեխաներին հայկական դպրոց տալ: Եվ ուրախալի՛ն այն էր, որ նրա ցանած սերունդը ծյարծակում էին: Ուր երեխաների հայր էր և համշենցի ամեն մի դպրոցականի հայրաբար էր մտնում, շատ անգամ իր շուրջը հավաքած հարյուր, երկու հարյուր դպրոցականների, անտեսելով բոլոր դժվարությունները բերում էր Հայաստան, ծանոթացնում Մայր հայրենիքին: Եվ երևանի բուհերն ավարտած շատ համշենցի երիտասարդներ պարտական են Ձեյթունյանին, որովհետև շատերին ինքն է համոզել, բառի բուն իմաստով ձեռք բռնած բերել երևան, խնդրել դասախոսներին, որ ներողամիտ լինեն նրանց հանդեպ, որովհետև Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցներում ուսուցիչներին մեծ պակաս կա, առարկաների մի մասը չեն անցնում, որովհետև այդ երեխաներից շատերը տասը տարի շարունակ ամեն օր 50-60 կիլոմետր ճանապարհ են կտրել, որպեսզի հայկական կրթություն ստանան:

Զեյթունյանը հիմնել է նաև մի քանի ազգագրական պարախմբեր: Մեծ ծիզերով նրանց համար տարազներ էր ձեռք բերում, այդ հանույթները բերում էր Հայաստան, որ Համշենի պարավեստին հայրենիքում ևս

ծանոթացնի: Նա ստեղծել է նաև մի քանի ինքնագործ քատերախմբեր, որոնք, ցավոք, Հայաստանից օգնություն չստանալով կարճ կյանք ունեցան:

Ամեն անգամ Հայաստան այցելելիս նա դատարկաձեռն չէր գալիս, քանզարաններին նվիրելու համար բերում էր Համշենի նվագարաններ՝ քեմենչեներ և քեմոնաներ, ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի համար հաստ թղթապանակներով բերում էր Համշենի բանախոսությունը՝ իր հավաքած հեքիաթներն ու երգերը, նաև ազգագրական նյութեր ու գրառումներ, Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հայկական բնակավայրերի իր կազմած քարտեզները և այլն: Իսկ Հայաստանից ծանր կապոցներով գրքեր էր տա-

ում համար թանկ էր հայ գիրն ու խոսքը: Խմբակի անդամները կապեր հաստատեցին Հայաստանի գրողների միության հետ, որի արդյունքում նրանց իրավերով մի շարք հայ գրողներ՝ Սերո Խանգաղյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Եմինը և ուրիշներ, այցելեցին նրանց, հանդիպեցին տեղի հայերի հետ:

Սերո Խանգաղյանի առաջաբանով երևանում հրատարակվեց «Չայն համշենական» առաջին ժողովածուն, որ կազմված էր համշենցի գրողների գործերից: Երկրորդ ժողովածուի «Կնքահայր» դարձավ Անդրանիկ Ձեյթունյանը: Այն լույս տեսավ 1978-ին և մեծ ոգևորություն առաջացրեց համշենցի հայերի շրջանում: Տարօրինակ խորությամբ հայ մանուկը



Հայաստանի գրողների միության դահլիճում հանդիպում Հայաստանի, Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հայ գրողների հետ, ծախից՝ աջ. Սիլվա Կապուտիկյան, Արշավիր Ջիրաթյան, Սկրտիչ Սարգսյան, Սերո Խանգաղյան, Անդրանիկ Ձեյթունյան և Աշոտ Քոչչոբյան, 1982թ.:

նում, որովհետև Կրասնոդարի երկրամասի այն մեկ-երկու գրախանութները, որոնցում փոքրիկ անկյուն էր հատկացված հայերեն գրքերին, չէին կարող բավարարել շուրջ 200 գյուղերում սփռված մեր տասնյակ հազարավոր հայրենակիցներին: Ցավալի էր, որ «Հայգիր» առևտրի վարչությունը և տարբեր կազմակերպությունները ոչինչ չէին անում Կրասնոդարի երկրամասում հայ գրքի կամառք (նաև շրջիկ), կազմակերպելու համար: Այն տարիներին, իսկապես, հայ գրքի մեծ պահանջ կար: Իսկ երևանի գրախանութներում կուտակվում և փոշուտվում էին հազարավոր հայերեն գրքեր:

Ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես Կրասնոդարի երկրամասի հայկական թերթյան գյուղում տանտերը՝ Սկրտիչ Գրբաշյանը, իմանալով, որ Հայաստանից եմ, բերեց և հպարտությամբ ցույց տվեց 1950-ական թվականներին լույս տեսած մի

խիստ հազվադեպ էր անդրադառնում Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հայությանը: Այդ առումով ամենայն զովեստի էին արժանի «Պիոներ կամչը» և «Սովետական դպրոցը», որոնք Աբխազիայի հայկական դպրոցների մասին մի շարք նյութեր տպագրեցին՝ ոգևորելով այնտեղի հայությանը:

Զբավարարվելով միայն գրական խմբակով, Անդրանիկ Ձեյթունյանի և մի խումբ մտավորականների նախաձեռնությամբ 1984-ին ստեղծվեց «Համշենահայ մշակութային միավորումը», որը համախմբում էր բազմաթիվ համշենցի գրողների, մկարիչների, երգիչների, ժողովրդական վարպետների և այլն: Մեծ, շատ մեծ ծրագրեր ունեցավ նա, բայց 1986-ին մահն ընդհատեց այդ հայրենամեր գործի կյանքը:

Երբ 1986-ի ձմռանը մեկնեցի Աղեր՝ նրա արխիվը երևան տեղափոխելու, շատ փնտրեցի, բայց չգտա նրա հուշերը, այդպես էլ չէր գրել, համոզված, որ դեռ կհասցնի, առջևում այնքան շատ ծրագրեր ու անելիքներ ունեցող, որ հուշեր գրելու ժամանակը չէր: Չնայած ինձ տված խոստումներին՝ նա չէր հասցրել կարգի բերել նաև իր արխիվը, որտեղ բազմաթիվ թղթապանակներում զետեղված էին նրա բանաստեղծություններն ու պատմվածքները, չէր հասցրել դրանցից ընտրել լավագույնները ու հրատարակման համծնել: Իսկ այն քիչը, որ նա հասցրեց տպագրել, սփռված են թերթերում ու ամսագրերում, և «Չայն համշենական» երեք ժողովածուներում:



Աղերի շրջանի Չերեշնյա գյուղի դպրոցի հայկական բաժնի ուսուցիչները և 8-րդ դասարանցիները, 1965թ.:

Նրա արխիվը քիչ թե շատ դասախոսելով և անհրաժեշտ մակագրություններն ու տեղեկատվությունը ավելացնելով 1987-ի սկզբին համծնեցի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին: Ցանկանում եմ մեր թերթի ընթերցողներին ներկայացնել «Չայն համշենական» գրական խմբակի մասին Անդրանիկ Ձեյթունյանի 1975թ. գրած հոդվածը, որը, բնականաբար, խորհրդային տարիներին չէր կարող հրատարակվել:

Սերգեյ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ՀԱՅՆ ՀԱՄՇԵՆԱԿԱՆ» ԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ

1951 թ., երբ ՌՍՖՍՐ լուսավորության մինիստրությունը հարց բարձրացրեց փակել հայկական դպրոցները, հայ ժողովրդի ազգային ինքնասիրությունը վարկաբեկող որոշման դեմ դուրս եկավ Աղեթի շրջանի հայ մտավորականների առաջավոր մասը և Հասարակական և քաղաքական գիտելիքների տարածման շրջանային կազմակերպությանը կից կազմեց հայկական սեկցիա: Խմբակի նպատակն էր՝ հայկական մշակույթի և հայ խոսքի տարածումը: Խմբակի մեջ էին՝ տղերիս հեղինակը, Պ. Փայլանը, Ղ. Պետրոսյանը, Ա. Սիմոնյանը, Գ. Առաքելյանը, Պ. Սարգսյանը և ուրիշներ:

Շրջանի ղեկավար մարմինները հայ խոսքից հային կտրելու նպատակով ուզեցին կարողացվող զեկուցումները դարձնել ռուսաց լեզվով: Մենք դիմադրեցինք: 1953թ. խմբակը փակեցին: Խմբակում հաճախ էին քննարկվում գրական հարցեր: Հայկական սեկցիայի վերականգնման համար մեր հետագա փորձերը ծախողվեցին:

1960թ. ինձ ուղարկեցին Դե-Սիմոն գյուղ՝ ժամանակավոր դիրեկտորի պաշտոնով, որտեղ ութամյա հայկական դպրոցը արդեն երկրորդ տարին էր, որ դարձվել էր ռուսական: Ծնողների մեծ մասը և ուսուցիչների զգալի մասը փափագում էին վերականգնել հայկական դպրոցը: Այդ գործին ձեռնամուխ եղա առաջին օրվանից և 106 հոգու ստորագրությամբ դիմում ուղարկեցի կուսակցական և կառավարական կենտրոնական օրգաններին, դրա հետ մեկտեղ ձեռնամուխ եղա կազմակերպելու գրական խմբակ, որին ակտիվ մասնակցեցին Գ. Խաչատրյանը, Ե. Հովհաննիսյանը, Բ. Բաբայանը, Ս. Քիրեշյանը և ուրիշներ:



Աբխազիայի Գուդաութայի շրջանի Փսիրցյա գյուղում, 1983թ.:

Հունիս ամսին, Կրասնոդարի երկրամասի ներկայացուցչի ղեկավարությամբ սկսեցին հայկական դպրոցի վերաբացման համար դիմումը ստորագրողներին հալածել, բայց ծնողների համառությունը կտրել չկարողացան: Ծնողները, ծերունի Ավագյանի գլխավորությամբ, պահանջեցին կաբինետային քննությունները դադարեցնել և հրավիրել ընդհանուր ժողով: Չնայած շարունակվեց հալածանքը, բայց ծնողները միահամուռ դադարեցին հրավերներին ներկայանալ: Ստիպված հրավիրեցին ընդհանուր ժողով, որտեղ, չնայած երկրամասի ներկայացուցչի և շրջանի ղեկավարների սպառնալիքներին, ծնողները որոշում ընդունեցին՝ վերաբացել հայկական դպրոցը: Շրջանի ղեկավարները փակեցին Աբագինկա գյուղի ռուսական դպրոցը և միացրեցին Դե-Սիմոն գյուղի հայկական դպրոցին և դպրոցի ղեկավարությունը համծնեցին ռուսներին, որոնք ոչ մի բան չէին հասկանում հայերեն: Ինձ հետ կանչեցին շրջուսբաժին, որտեղ աշխատում էի տեսուչ: 1950 թվից և արգելեցին զնալ գյուղերը:

1963թ. փակեցին Աղեթի շրջանի հայկական 22 դպրոց (շրջանում կար 26 դպրոց) և վերացրեցին հայկական դպրոցների տեսուչի պաշտոնը: Տեղափոխվեցի Չերեշնյայի հայկական միջնակարգ







**Нона Шахназарян**

Центр понтийско-кавказских исследований,  
кандидат исторических наук, г. Краснодар

этнического самосознания»<sup>7</sup>.

Новые комбинации хемшилской идентичности и происхождения констатирует грузинский исследователь Цатз Бацаши, утверждая, что у хемшинов Лазистана доминирует лазское самосознание. Он пишет о том, что хемшины Турции дают детям «домашние» ласкательные имена и прозвища, которые... явно лазские, как по смыслу, так и по звучанию. Кроме того, ссылаясь на данные Н.Я. Марра, он говорит о хемшинских фамилиях, которые «также являются лазскими по содержанию и смыслу»<sup>8</sup>. Такой же точки зрения в пользу лазского происхождения хемшинов придерживается Энтони Брайер, называя их арменизированными чанами. Он высказывает мнение, что в период между VII и XI веками перские Багратиды арменизировали хемшинов (Some Notes On The Laz and Tzani).

Очевидно, вопрос о «происхождении» хемшилов достаточно сложный и спорный. Однако, в рамках предлагае-

войти в коллектив [в колхоз] — значит, ненадежные люди стали для государства. Поэтому спецвысылку устроили».

Бакрадзе Отари, с. Сарпи: «До 1937 года мы спокойно ходили туда и обратно. У нас были там земельные участки, у них тут — но только с утра и до вечера [разрешалось оставаться в Турции и соответственно в Аджарии]. Разрешение было только на обработку земли». «Хемшилы имели жен турецкоподданных и сами в колхоз не зашли, свое личное хозяйство имели, овцеводческое... яйла были...»

Абуладзе Джемал, официально 1940, фактически 1938 г.р., с. Ахалсопели: «Граница закрылась и семьи, родственники оказались по разные стороны. Когда у нас умирали, и вот несут мертвеца, похороны... женщины громко плакали и говорили, такой-то такой из этой семьи умер, и там тоже поминали его... вот так общались между собой. Потом запретили громко плакать, стали понимать. Уже грузины стали служить, как говорят, закладывать стали, предавать».

Оказавшись в границах СССР, теоретически хемшилы могли рассчитывать на относительную стабильность, поскольку, «несмотря на наличие «пятой графы —

стане и Киргизии; по 50 семей в Ростове и Воронеже; какая-то часть в Турции. По данным Осипова А. («Хемшины, хемшилы, хемшинлы» неопубликованная рукопись) «в границах бывшего СССР живет порядка 700 хемшилских семей. Они расселены следующим образом. В России живет более 200 семей, в том числе в Краснодарском крае (Апшеронский и Белореченский районы) - около 150, в Ростовской области (Каменский район) - примерно 30, в Воронежской области (Грибановский район) - 30. В Киргизии остается не менее 280-300 семей, в том числе в Джелалабадской области - 130-140, в Ошской области - 100-140, в Бишкеке - 50. В Чимкентской области Казахстана (Сайрамский район) живет около 100 семей и примерно столько же в Джамбульской области (Джамбульский район)».

2. Кузнецов И., Одежда армян Понта. Семиотика материальной культуры. М. «Восточная литература» РАН. 1995. с. 22-25; Кузнецов И. Турки-хемшилы или исламизированные армяне? // Диаспоры. N 1-2. М. 2000. с. 226-258; Vaux, Bert Homshetsma: The Language of the Armenians of Hamshen (The Hemshinli,

**ДРЕЙФУЮЩАЯ ИДЕНТИЧНОСТЬ: СЛУЧАЙ ХЕМШИЛОВ (ХЕМШИНОВ)\***

дикальных общественных изменений и какие поведенческие стратегии из этого следуют. Какие социальные условия и факторы детерминируют этническую (ре-) ориентацию общностей.

Статья написана в основном на базе материалов полевых исследований, собранных в местах проживания хемшилов (Краснодарский край, Апшеронский район, пос. Вперед, Ерик, Ким, Калинин, ст. Кубанская; Грузия, Аджария, Хелвачаурский район, с. Сарпи, Ахалсопели, Кахабери, Гонио, Джарнали, Ферия, Урехи). Выявление интересующих аспектов стало возможно благодаря применению качественных, «мягких» методов исследования (биографические нарративы) в контексте «культурно-аналитической» традиции.

Принято считать, что хемшилы (самоназвание хомшеци) - армяноязычные турки с «нечетким», «кочующим» этническим самосознанием. Большинство исследователей склоняются к мнению, что хемшилы - потомки насильственно исламизированных армян из области Хамшен (Hamshen) в восточно-анатолийском побережье Черного моря<sup>2</sup>.

Из-за фрагментарности сохранившихся письменных источников можно только конструировать историю мусульманизации хемшилов в Османской империи со всеми вытекающими последствиями (по большей части стабилизирующими и жизнеутверждающими). При этом, помимо отрывочных сведений о том, что хемшилы Турции тайно отправляли, наряду с мусульманскими, христианские культы, в современном быту хемшилов существуют «странные» ритуалы-обычаи, намекающие на возможное исповедование ими христианства в прошлом<sup>3</sup>. Пережитки христианства сохранялись у хемшилов еще в начале 19 века, а в некоторых районах, например Ризе, по сообщениям академика В. Гордлевского, даже позже<sup>4</sup>. В то же время, исследователями отмечалось проявление необузданного рвения со стороны новообращенных: «окрестные городки вокруг Трапезунда — Оф, Сюрмене — в дальнейшем поставляли для ислама мулл, фанатичность которых была известна всюду в Малой Азии; они вносили в ислам нетерпимую горячность прозелитов...»<sup>5</sup>. Строгую приверженность исламу уже в советский период отмечают и лазские соседи хемшилов в Аджарии (с. Сарпи)<sup>6</sup>. Согласно Кузнецову И., «мусульманизация для армян означала не только глобальные культурные деформации — от хозяйственно-культурного типа до социальной организации, но и потерю

мой статьи проблематизируются реально действующие механизмы смены идентичности у представителей общности хемшилов. А исторический дискурс привлекается здесь в свете мнения, что обращение к истории позволяет выяснить причины, источники и условия современных изменений в обществе<sup>9</sup>.

Факторы, обусловившие маргинализацию хемшилов

Так сложилось, что хемшилы - носители нескольких идентичностей одновременно. Какие факторы могли повлиять на этот процесс? Этническая идентичность очень часто (можно сказать, с некоторой циклической повторяемостью) в истории хемшилов играла роковую роль. Национальные концепции как предков, так и современных хемшилов исходили из тяжелого личного опыта в культурных реалиях, где национальные идентичности вытекали и продолжают вытекать в настоящие бедствия, угрожая подчас физическому существованию. Сложные перипетии истории хемшилов были напрямую связаны, по всей видимости, с их проживанием в приграничной зоне (Турция — Грузия = СССР), то есть они были маргинальны по определению. Именно проживание на границе и наличие родственников в Турции, стали декларируемыми причинами высылки хемшинов в 1944 году — так называемая «превентивная мера военного времени, обеспечивающая «благонадежность» и «лояльность» пограничного населения»<sup>10</sup>. Этот факт подтверждают и информанты.

Дурие Караибрагим оглы, 1959 г. р., с. Урехи: «Когда в Сарпи подняли [советский] флаг, на той стороне оказались не только родственники, но и семьи. Часть семьи оказалась здесь в советской Аджарии, другая в Турции».

Информант Кахидзе Хаки, 1912 г.р., с. Сарпи: «Некоторые хемшилы имели турецкие паспорта и действительно были и туда, и сюда. Большинство из них перешли к нам [в Сарпи] из Хопа и занимались к лазам работать... потому что там жизни не было, ничего не было, ни спичек, ни мыла, ни сахара, ни керосина, вообще ничего не было. Но там у них были шикарные кирпичные дома. Здесь другая жизнь была при советской власти, все доставали. Они брали отсюда все это и туда таскали, в Хопа. В конце концов, они стали очень богаты... Мой дед и другой тут был дед Кандилабо занимали хемшилов пастухами. После того, как появилось лекарство от болезни овец, скотина развилась, а то сдыхалась. И дела их снова пошли вперед. Очень работающие люди были, очень... Они не хотели политику, смотрели на Турцию из-за денег». Тот же информант: «Хемшилы и курды при коллективизации отказались

национальность» в различных документах, этническая идентичность была практически малозначимой. В условиях нивелирующей советской модели социализации национальность отселялась на задний план всеобщей «советской» повседневной культурой»<sup>11</sup>. Однако, это касалось всех, только не хемшилов и некоторых других «неблагонадежных» народов (среди них: немцы, греки, курды, грузинские мусульмане, турки, чечены, ингуши, карачаевцы, крымские татары и др.), посланных советским руководством в трудные для жизни районы в период войны с Германией. В данном случае сыграла роковую роль, наоборот (в отличие от реалий понтийско-анатолийского контекста), турецкая идентичность хемшилов в связи с напряжением политических отношений с Турецкой республикой в ходе второй мировой войны.

Сюда можно присовокупить и такой фактор как политические и экономические интересы верховного руководства и простых жителей в Аджарии (Грузинская ССР). Они не были решающими, но в дальнейшем продиктованные ими стратегии сыграли свою негативную роль в препятствовании к возвращению хемшилов на прежние места проживания и компенсацию их имущества. Речь идет о местном населении (грузины, лазы), скрыто заинтересованном как в этнической «чистке» (грузинское руководство), так и присвоении имущества трудолюбивых, ориентированных на процветание хемшилов (некоторые рядовые граждане)<sup>12</sup>. Так или иначе, 25 ноября 1944 г. по постановлению Комитета государственной безопасности СССР № 6279 от 31 июля 1944 г. хемшилы подверглись тотальной этнической депортации, носившей внесудебный, административный, поголовный характер в духе того времени<sup>13</sup>.

Пережив режим «спецпоселения», и оправившись после реабилитации в 1956 г., уравнявшей их в правах с остальными советскими гражданами и снявшей с них стигму «предателей родины»<sup>14</sup>, хемшилы встали перед лицом новых разрушительных проблем, связанных с так называемым парадом суверенитетов - распадом СССР и этнических конфликтов в «независимых» государствах на российской периферии. Под давлением националистически настроенных бандитских группировок в Киргизии хемшилы снова были вынуждены покинуть насиженные места, переехав в Краснодарский край<sup>15</sup>.

**Примечания**

1. По приблизительным данным духовного лидера хемшилов Хасана Салиха на 2003 г. в Краснодарском крае сегодня проживает около 200 семей; примерно до 100 семей хемшилов проживают в Казах-

ed. H. Simonian); Vaux, Bert Hemshinli: Forgotten Black Sea Armenians. www.uwm.edu/~vau/hamshen.pdf. Из числа дореволюционных исследователей: Мегаворян А.П. К вопросу об этнографических условиях развития народностей Чорохского бассейна // ИКОИРГО, т. 17. N 5. Тифлис. 1904. с. 365 и др.

3. См. источники, свидетельствующие о криптохристианстве хемшилов: Меликсет-Бекоев Л.М., Pontica Transcaucasica Ethnica (по данным Миная Медичи от 1815-1819 гг.) // Советская этнография. 1950. N 2, с. 166: «Хамшены делятся на две части. Многие из них обращены / в ислам/, однако соблюдают христианские обычаи. Они не скупаются в приношениях и /раздаче/ милостыни. Почти все в день преображения и успения богородицы отправляются в церковь, зажигают свечи и приносят жертвы за спасение душ своих предков»; Брайер Э. (Bryer A., Winfield D. The theme of Greater Lazia and the Land of Arhakei. Section XXVI // The Byzantine monuments and topography of the Pontos. Harvard university. 1985. с. 337) пишет со ссылкой на Кюине и др. (Cuinet, Turquie d'Asie, 1,119-120.; Ritter, Erdkunde, XVIII, 923-927; Bzhshkean (1819), 96.), что мусульманские хемшинлы крестили своих детей в 1890...»; Мегаворян А.П. К вопросу об этнографических условиях развития народностей Чорохского бассейна // ИКОИРГО, т. 17. N 5. Тифлис. 1904. с. 367 пишет об исламизации «хамшинлы» как о чем-то не требующем подтверждений и рассуждает о последствиях этого события для «национального характера»: «массовое обращение в новую веру и в особенности в веру политически господствующего племени, как в данном случае обращение христианских народностей в ислам, представляющий бесправному гявуру все права и даже привилегии — должно было произвести коренной переворот в их нравах, обычаях и занятиях...».

Из ряда бессознательно производимых хемшилами ритуалов: царапание ножом креста над дверным косяком при выводе невесты (см. Кузнецов И. Турки-хемшилы или исламизированные армяне? // Диаспоры. N 1-2. М. 2000. с. 240-241); скрещивание лезвий двух ножей в виде X в момент вхождения невесты в дом жениха в верхней части дверного косяка (с. Урехи, информант Дурие Караибрагим оглы: «до сих пор спрашиваем стариков, почему крестом? Ответа нет...»); производимый хемшилами ребром ладони крестообразный жест при выпечке хлеба (интервью в с. Ахалсопели, пос. Кахабери, с. Ферия, с. Урехи Аджарии). Информанты объясняют последнее действие так: «мы и наши предки всегда так делали, просто чтоб удобно было

\* Благодарю за помощь в написании этой статьи всех моих информантов, моего переводчика с грузинского языка в г. Батуми Д. Тебидзе, моего научного руководителя И. Кузнецова, моего коллегу, социолога Р. Чилингиряна (Кембриджский университет, Великобритания).

разламывать хлеб на части». Информант Айвазов Леван, 1934 г.р., г. Батуми: «Все наши местные мусульмане складывали в каменную сковородку кукурузный хлеб (тчади) и рукой обязательно делали на хлебе знак Х, но не +. Объяснить, почему они это делают - не могли...»

4. Гордлевский В.А. Избранные сочинения 4-х томах. М. 1962-1968. Т. 3. с. 329.

5. Там же, с. 144.

6. Информант Кахидзе Хаки, 1912 г.р., с. Сарпи: «Хемшили нам даже говорили: лазы делают термони (это виноградный сок, по-турецки бекмези), а мусульмане не кушают термони. Христиане тоже делали эту пищу. Поправляли нас... Никогда на христианскую сторону они не шли».

7. Кузнецов И.В., Одежда армян Понта. Семiotика материальной культуры. М. «Восточная литература» РАН. 1995. с. 22.

8. Бацаши Ц. Н., Этнорелигиозный состав населения северо-восточной Анатолии в 19-20 вв. диссертационная работа. Тбилиси. 1988. с. 116-117.

9. Nisbet R.A., Social Change and History. NY.: Oxford Univ. Press, 1969. p. 302-303.

10. Nekrich A.M., The Punished peoples. The deportation and fate of Soviet minorities at the end of the Second World War. W.W. Norton & Company. Inc. New York. 1978. p. 104.

11. Конструирование этничности (под ред. Воронкова В. и Освальд И.) СПб. 1998. с. 6.

12. Хотя неизменным остается и тот факт, что, согласно свидетельствам информантов, процесс заселения непосредственных сельчан в жилища хемшилов был не совсем простым и гладким. Связанные узами дружбы и добрососедства с новососланцами, местные жители часто отказывались селиться в опустевших домах хемшилов. Грузинскому руководству пришлось вести пропаганду и пригласить молодые семьи из горного с. Хуло, которые также не очень охотно вырывались из своих больших патриархальных семей (информанты из с. Ахалсопели, Ферия).

13. По данным Цецхладзе Н., среди переселенцев их Хелвачаурского района хемшины составляли 152 семьи, 1087 человек. В ноябре 1944 г. из Аджарии переселили 304 хемшинские семьи, в том числе из Батумского района - 231, собственно из Батуми - 6, из Кобулетского района - 34, Кедского района - 5, Хулойского района - 28 семей. См. Мгеладзе, Н.В., Тунадзе, Т.Х. Из истории хемшинов восточной Турции и юго-западной Грузии // Археология, этнология и фольклористика Кавказа. Материалы международной конференции Ереван. Эчмиадзин. 2003. с. 272.

14. Осипов А., (неопубликованная рукопись): «В 1958 году семь семей попытались самостоятельно вернуться в деревню Авга, но им не дали этого сделать аджарские власти. Немного позднее попытку повторили другие - и также неудачно. 30 хемшильских семей, осевшие после всех мытарств в Ланчхутском районе Грузии, в июне 1960 года были насильственно выселены за пределы республики. Последующие почти 30 лет хемшилы были вынуждены оставаться там, куда их сослали - в Киргизии и Казахстане».

15. Что касается номинальной (данные статистики, переписи) и реальной (подсчеты исследователей и активистов общины) численности хемшилов, существуют следующие выкладки: хемшилы проживали в границах Аджарской АССР, Грузии вплоть до 1944 года и в материалах Всесоюзной переписи населения

## АМШЕНЦЫ НА ДОРОГАХ МИРА

В 1991г. в Ереване начала издаваться газета «Луйс Амшени» («Свет Амшена»), основанная журналистом, автором сборников народных сказок, басен, легенд - «Огненный конь» (1981), «Сны царя» (2003), знаменитой книги «Столицы Армении» (1995), многочисленных публикаций об амшенских армянах, заместителем председателя Землячества «Амшен» Сергеем Варданяном. Распространяемая бесплатно в Краснодарском крае, Абхазии и других регионах, где проживают амшенцы, газета быстро обрела популярность, однако из-за нехватки спонсорских средств через год закрылась. Лишь спустя 12 лет, в 2004 году Сергей Гагикович вернулся к работе над периодическим изданием об амшенцах и для амшенцев. Двухязычная газета «Дзайн амшенакан» («Голос амшенский») уже начала выходить под патронажем Землячества. Мы попросили Сергея Варданяна рассказать о своем творчестве, о самом издании, жизни и проблемах амшенцев.

— С чего начиналось ваше литературное творчество?

— Работая в газете «Пионер канч», в 1978 г. я обратился с ее страниц к школьникам с просьбой прислать в редакцию сказки, легенды, которые, я был уверен, еще помнят их бабушки, и объявил конкурс на лучшую работу. Поток писем начал поступать из разных городов СССР, где проживали армяне, и регионов Армении. Научная обработка материала, составление словаря диалектов заняли около трех лет, и в 1981г. вышла в свет книга «Огненный конь», в которую вошел фольклор современной Армении, областей Западной Армении - Алашкерта, Васпуракана, Сасуна, а также Карабаха, Нахиджевана, Абхазии, Краснодарского края и т.д. Отдельные части книги были переведены на русский, словацкий, венгерский и другие языки и имели большой успех. Но дети продолжали посылать «бабушкины сказки», и в 2003 г., я издал на их основе второй сборник - «Сны царя». Особенностью этих изданий

